ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2018թվականի N 14

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 2-ի թիվ 3 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Պարտավորություն ստանձնելու մասին:
2. Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՐՏԻ 2018թվականի N 15

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

*համայնքի ավագանին որոշում է.*

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 ՄԱՐՏԻ 2018թվականի N 16

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել՝ *համաձայն հավելվածի:*

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱՑԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Նոր Երզնկա համայնքի ավագանու
02.03.2018թ. N 16 որոշման

| Հ/հ | Հողատեսքը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Կադաստրային արժեք % | Կարգը | Աճուրդի մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուղ. նշանակության արոտավայր | 0122-0125 | 1.08875 | 200 | 5 | 146981 |
| 2. | Գյուղ. նշանակության արոտավայր | 0139-0022<br>0107-0074 | 0.40705<br>0.45 | 200 | 5 | 115702 |